# ՍԻՈՆ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ 1928-Ի ՀԱՄԱՐ

Տ. Զաւէն Վրդ. Վարժեանէ Երուսաղէմէն՝ Սպեջեան Միհրանին Պաղտատ։

Տ. Յովհաննէս Վրդ. Ասատուրեանէ Երուսաղէմէն՝ Ասատուրեան Մանուէլին Պոլիս։

Քէֆէլեան Գարեգինէ Երուսաղէմէն՝ Յօթօղեան Օննիկին Իզէռ։

Եաղուպեան Յակոբճանէ Երուսաղէմէն՝ Համբարձումեան Սեդրոսին Պաղտատ։

Գեր. Տ. Սմբատ Եպս. Գազազեանէ Պոլսէն՝ Ս. Փրկչայ Ազգ. Հիւանդանոցին Պոլիս։

Վեր. Հ. Հ. Խազօեանէ Քալիֆօրնիայէն՝ Նազարեան Ղազարին Պրազիլիա։

Զամանեան Արմենակէ Հարարէն՝ Կէօվհէրեան Տ. Յովհաննէս Քհն.ին Ատիս Ապապա։

Տէօթէեան Տ.է Սիրաքիւզէն՝ Ազգ. Վարժարանին Յոպպէ։

Համալեան Յակոբէ Հալէպէն՝ Ս. Մաթոսեանին Հալէպ։

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ Սիոնին նուիրած է Քսանհինգ տոլար, որուն համար Սիոնի Խմբագրութիւնն ու Վարչութիւնը կը յայտնեն իրենց շնորհակալիքը։

# ԿՈՉ

## «ՀԱՅ ԳԻՐ»Ի ԱՇԽԱՏԱՒՈՐԷ ՄԸ

## «ՀԱՅ ԳԻՐ»Ի ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐՈՒՆ

Ձեռնարկած ըլլալով պատրաստելու «Հայկական Նոր Մատենագիտութիւն եւ Հանրագիտարան Հայ Կեանքի» աշխատութիւնս, որուն առաջին հատորը (Ա—Մ) ամբողջացաւ 1911ին, և վերջերս Ե և Ն գրերն ալ հրատարակուեցան, ատոնք եւ հին սպառած ըլլալով, կը դիմեմ բոլոր հրատարակիչներուն, հեղինակներուն, խնդրելով որ հաճին իրենց հրատարակած կամ հեղինակած գրքերէն մէկմէկ օրինակ ղրկել. գրագէտներուն՝ որ իրենց գրական կեանքը՝ համառօտիւ՝ խմբագրութիւն, թղթակցութիւն այս կամ այն թերթի, իրենց ծածկանունները, եւն, եւն, հաղորդել։ Գործս՝ շարունակութիւնը պիտի չըլլայ հրատարակուածին. ան՝ մինչեւ 1905 տարին կը հասնէր, անկէ ի վեր 23 տարի անցած է և ահագին բան տպուած, և արդէն սակաւաթիւ օրինակներ կը մնան։ Ուստի պիտի ըլլայ միաձոյլ ամբողջութիւն մը, բարեփոխուած ծրագրով, զեղչումներով և յաւելումներով Այբէն՝ Ֆ, 1512—1930։ Հայկական Հարցի, Հայկական Մատենագրութեան առանձին գլուխներ բացած ըլլալով, կը խնդրեմ նոյնպէս որ այդ նիւթերուն, նոյնպէս հայկական կեանքի վերաբերեալ ինչ գրութիւն որ ունին հայերէն թէ եւրոպական ոեւէ լեզուներով, հաճին ղրկել։ — Ինչ որ ստանամ՝ պիտի ծանուցուի մեր «Բազմավէպ»ին մէջ շնորհակալութեամբ։

ՎԵՆԵՏԻԿ

Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

# ԿՈՉ

## ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՄԵՍՐՈՎԲ Յ. ՍԷԹԵԱՆՑԻ
## ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԻ

### ԿԱԼԿԱԹԱ

*ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ*

*Այս տարի պարփակւում է Հնդկահայոց պատմաբան եւ հնախոյզ ՊՐՆ. ՄԵՍՐՈՎԲ Յ. ՍԷԹԵԱՆՑԻ կրթական եւ գրական փայլուն գործունէութեան քառասնամեակը։*

*Հնդկաստանի, Պարսկաստանի եւ արտասահմանի բազմաթիւ հիացողների ու բարեկամների ջերմ բաղձանքին բաւարարութիւն տալու համար է, որ վաստակաւոր գրական գործիչը համաձայնեց որ նախաձեռնարկ լինենք տօնելու իւր ՅՈՒԲԵԼԵԱՆԸ. ի նկատի ունենալով որ դա կարող է բարերարիկ հետեւանք ունենալ գաղութիս համար։*

*Հնդկահայութեան տարեգրութեանց մէջ եզակի այդ դէպքը արժանավայել շքով պիտի տօնւի ներկայ տարւայ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-ին։*

*Պրն. Մեսրովբ Յ. Սէթեանցի կրթական գործունէութիւնն սկսում է 1888-ից երբ նա իւր ծննդավայր Նոր-Ջուղայում ուսուցչութեան պաշտօն է ստանձնում։ Անցնելով Կալկաթա, ուսումնասէր պատանի Մեսրովբը համալսարանական մուտքի քննութեանց առթիւ ոսկի մետալի է արժանանում «Dux of the College»-ի նախանձելի տիտղոսով։*

*1894-ից մինչեւ օրս նա վարել է պետական համալսարանի հայերէն լեզուի քննիչի պաշտօնը. քսան տարի Մարդասիրական ճեմարանի վարչութեան անդամ եւ հինգ տարի էլ հոգաբարձու է եղել, միշտ փայփայելով այդ կրթական պատկառելի հաստատութիւնը որ աւելի քան մի դար է ինչ այս հեռաւոր գաղութում ազգային կեանքի հուժկու ազդակն ու առանցքն է հանդիսանում։*

*Սէթեանցը գրական ասպարէզ է իջնում 1891ին՝. Նա աշխատակցել է արտասահմանի հայերէն թերթերին որոնք հաճոյքով շարունակում են հրատարակել նուիրական գրաբառով նրա մէկը միւսից աւելի խոհուն եւ հետաքրքիր յօդուածներ միեւնոյն ժամանակ նա սերտ կապ է ստեղծել գրական դէմքերի հետ։*

*Որպէս ախոյեան ազգային կրթութեան Պրն. Սէթեանցն ընտրուեց առաջին նախագահ, նորակազմ Կալկաթայի ՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ որ Պարսկա-Հնդկաստանի թեմի ցրուած զաւակներին շաղկապող նուիրական զօդն է։*

*Առաջին երկը, «History of the Armenians in India» երեւացել է 1895-ի, եւ սրան յաջորդել է շահեկան ուրիշ հրատարակութիւններ, որոնք մեծապէս գնահատուել են, եւ Կալկաթայի, Լոնդոնի եւ Փարիզի «Asiatic Society»ներն ընդունել են հայ գրագէտին իրենց գրկում, իսկ չորս տարի առաջ Հնդկ. Կառավարութիւնը նշանակեց նրան անդամ «The Indian Historical Records Commission»-ի, որի տարեկան գումարումներին կատարում է լուրջ բանախօսութիւններ։*

*Սիրելի հայրենակիցներ, այսպիսի բարձր արժանիքներ պանծացնելու համար է, որ կոչ ենք անում ձեզ խնդրելով որ ձեր գնահատութեան եւ յարգանքի երաշխիքը ընծայէք ազգասէր եւ մեղուաջան Յոբելեարին։*

### ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

*Նախագահ-Ազնուամեծար Պրն. Յ. Գալստանեան. Փոխ-Նախագահ Պրն. Յ. Յարութիւնեան*
*Քարտուղար - Պրն. Վիքթոր Վարդանեան. Գանձապետուհի - Տիկ. Ա. Արա*

### ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐ

*Տիկ. Ա. Յովհաննիսեան. Դր. Ս. Յ. Սէթեան. Օր. Ա. Բարսեղեան. Պրն. Մ. Խաչիկեան*
*» Թ. Բարսեղեան. Պրն. Կ. Գալստանեան. Պրն. Դ. Դաւթեան. » Մ. Յովհաննիսեան*
*» Մ. Բարսեղեան. » Մ. Աղանուր. » Զ. Հանանեան.*

*Կալկաթա, 8 Օգոստոս 1928.*

*Նամակները հասցէ*
VICTOR VARDAN ESQR.
Armenian College, 39, Free School Street,
Calcutta, (India.)

*Նուէրները հասցէ*
Mrs. A. J. ARA,
15, Park Street,
Calcutta, India.

digitised by A.R.A.R.@

## ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

Գեր. Մկրտիչ Եպս. Աղաւնունիի ՄԻԱԲԱՆՔ ԵՒ ԱՅՑԵԼՈՒՔ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ գործը։ Արդիւնք երկարամեայ պրպտումներու, որ կոչուած է հետաքրքրական պակաս մը լեցնել Հայ Երուսաղէմի պատմութեան մէջ։ Գործը յատուկ անուններու բառգիրք մըն է ըստ ինքեան, պիտի բովանդակէ 1500 է աւելի անուններ կենսագրական և պատմական տեղեկութիւններով ճոխացած։

Տպագրութիւնէն ետքը պիտի որոշուի գիրքին գինը։

Անոնք որ կը փափաքին ունենալ այս գիրքը, կրնան այժմէն արձանագր[illegible] իրենց անունը և հասցէն, [illegible] Տպարանիս Տեսչութեան։

DIRECTION DE L'IMPRIMERIE
Arménienne de St Jaques
JERUSALEM — PALESTINE



Դպրոցասէր Տիկնանց Ընկերութեան վերակազմութեան առթիւ, Կեդր. Վարչութեան որոշմամբ Վարժարանը փոխադրուած է Բարիզ Մայիս 31ին։ Դպրոցի նոր հասցէն է.

ÉCOLE TEBROTZASSÈRE
(Ancienne Institution Thiers)
3bis Avenue Thiers
LE RAINCY (Seine-et-Oise)



## ՍԻՈՆ

ՍԻՈՆի 1927ի հաւաքածուն կազմուած կը ծախուի 8 Անգլ. Շիլինի կամ 40 Եգ. Ղրշի։



Հրատարակուած է Հալէպի գրագէտ Առաջնորդ Արտաւազդ Վարդապետին ՏԱԹԵՒ Տարեցոյցին Երդ Տարին (1929) նոյն բովանդակութեամբ։ Դիմել ուղղակի հեղինակին։

Ardavazt Vartabèd Surméyan
Prélature Arménienne
B. P. 133 Alep — Syrie


## ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ

---

Բնիկ Արաբկիրցի Նազարէթ Մարկոսեան կը փնտռէ գաղթականութեան ժամանակ Սեբաստիայէն հանուած իր կինը Մարիամը եւ երեք աղջիկները՝ Սաթենիկ՝ այն ժամանակ 14 տարեկան, Զարուհի՝ 12 տարեկան և Լուսնթագ՝ 6 տարեկան և իր որդին Արշաւիրը 3 տարեկան։

Գիտցողներէն կը խնդրուի տեղեկութիւն տալ հետեւեալ հասցէին.

Mr. NAZARETH MARGOSSIAN
224 E. V. 5 ST.
NEW YORK

digitised by A.R.A.R.@